

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պաշտոնի /գբաղմունքի/ անվանումը	Սպառողական ապրանքների որակի փորձագետ
I. Դերը	Սպառողական ապրանքների որակի փորձագետը հետազոտում է ապրանքների որակի բնութագրերը, տալիս է եզրակացություն, մասնակցում է ապրանքային տեսականու կառավարմանը
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1	Կազմակերպել իր աշխատանքը
Աշխատանքային գործընթացը	Կոնկրետ իրավիճակներում գնահատել ընթացիկ և հեռանկարային աշխատանքների ծավալը, կազմակերպել աշխատատեղը, ապահովել բնագավառի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի և փաստաթղթերի առկայությունը, աշխատանքային խնդիրներին համապատասխան կազմել ձևաթղթեր, կազմել հետազոտությունների անցկացման կարիքների համար անհրաժեշտ սարքերի, հարմարանքների և պարագաների ցանկ, սահմանել աշխատանքների կատարման հերթականությունը, կազմել ժամանակացույցեր,
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - կատարելիք աշխատանքների ծավալը և ընդգրկումը ճիշտ գնահատված է, - ըստ ժամանակահատվածների աշխատանքների բաժանումը և կատարման հերթականությունը հիմնավորված է, - աշխատատեղի պայմանները համապատասխանում են առաջադրանքները կատարելու համար պահանջվող չափանիշներին, - գործող նորմատիվ փաստաթղթերը և դրանց կիրառման վերաբերյալ օժանդակ ու հարակից նյութերն առկա են, - աշխատանքի ընթացքում օգտագործվող ձևաթղթերի բովանդակությունը ամբողջական է, - հետազոտությունների համար պահանջվող տեխնիկական միջոցների և հարմարանքների անվանացանկը լրիվ է կազմված, - աշխատանքների ժամանակացույցը հիմնավոր և իրատեսական է:
Խնդիրների բնագավառ 2	Ընտրել հետազոտության կարիքների համար անհրաժեշտ տեղեկատվական հենքը
Աշխատանքային գործընթացը	Ըստ իրավիճակի ընտրել ապրանքների սպառողական հատկությունների հետազոտման նպատակով օգտագործվող միջազգային, միջպետական, ազգային, ճյուղային, կազմակերպության նորմատիվ փաստաթղթեր, հարակից և օժանդակ փաստաթղթեր, տեղեկատուներ, առանձնացնել կոնկրետ դեպքի համար պահանջվող փաստաթղթերը, աշխատանքային ձևաթղթերում լրացնել որակի ցուցանիշների բազային բնութագրերը:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - ընտրված նորմատիվ փաստաթղթերի կազմը լրիվ է, - հարակից և օժանդակ փաստաթղթերը և տեղեկատուները լրիվ

	<p>են,</p> <ul style="list-style-type: none"> - պահաջվող դեպքի համար պահանջվող փաստաթղթերի փաթեթը ճիշտ է ընտրված, - աշխատանքային ձևաթղթերում որակի ցուցանիշների բազային բնութագրերը լրիվ և ճիշտ լրացված է:
Խնդիրների բնագավառ 3	Կատարել նմուշառում
Աշխատանքային գործընթացը	Ստուգել նմուշառման պայմանները, որոշել ընտրանքի քանակը, որոշել ընտրանքի եղանակը, Նախապատրաստել նմուշառման պարագաները, ընտրել և վերցնել նմուշ, նմուշը պատրաստել տեղափոխման համար, կատարել նմուշառման փաստաթղթային ձևակերպում:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - նմուշառման պայմանների համապատասխանությունը իրականին ապահովված է, - ընտրանքի քանակությունը հիմնավորված է, - ընտրանքի եղանակը ճիշտ ընտրված է, - նմուշը ճիշտ է ընտրված, - նմուշը ճիշտ է վերցված, - նմուշի տեղափոխման պայմանները պահպանել է, - տեղափոխման և հետազոտման համար նմուշը ճիշտ է Նախապատրաստել, - նմուշառման փաստաթղթերը ճիշտ ձևակերպված է:
Խնդիրների բնագավառ 4	Ջետազոտել ապրանքների սպառողական հատկությունները
Աշխատանքային գործընթացը	Ընտրել հետազոտման մեթոդը, ապահովել հետազոտման պայմանները, հետազոտման պարագաները բերել աշխատանքային վիճակի, Նախապատրաստել նմուշը, որոշել որակի բնութագրերի փաստացի արժեքը, գրանցել դրանք, ստուգել փաթեթավորման ճշտությունը, ստուգել ապրանքի վերաբերյալ տեղեկատվության լրիվությունը, ստուգել ապրանքի քանակական բնութագրերը, ստուգել ապրանքի լրակազմությունը:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - հետազոտման մեթոդը ճիշտ ընտրված է, - ապահովված են հետազոտման պայմանները, - նմուշի փաստացի բնութագրերը հետազոտման ընթացքում պահպանվում է, - հետազոտման համար օգտագործվող պարագաները բերված են աշխատանքային վիճակի, - ըստ հետազոտվող բնութագրի նմուշի Նախապատրաստումը հետազոտման համար ճիշտ է, - պարամետրի փաստացի արժեքը ճիշտ որոշված է, - պարամետրի փաստացի արժեքը ճիշտ գրանցված է:
Խնդիրների բնագավառ 5	Մշակել ապրանքների սպառողական հատկությունների հետազոտության արդյունքները, կատարել եզրակացություն
Աշխատանքային գործընթացը	Խմբավորել և ընդհանրացնել հետազոտության արդյունքները, կատարել ամփոփ եզրահանգումներ, տալ վերջնական

	գնահատական, սահմանված կարգով ձևակերպել արդյունքները, լրացնել անհրաժեշտ փաստաթղթերը:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - հետազոտման արդյունքների նախապատրաստումը մշակման համար ճիշտ է կատարել, - ընդհանրացումները և եզրահանգումները հիմնավոր է, - հետազոտության արդյունքների վերջնական ձևակերպումը ճիշտ է, - հետազոտության արդյունքների փաստաթղթային ձևակերպումները ճիշտ է:
III. Պատասխանատվությունը	Սպառողական ապրանքների որակի փորձագետը պատասխանատու է իրավական ակտերի և նորմատիվ փաստաթղթերի պահանջների պահպանման, ապրանքի սպառողական հատկությունների օբյեկտիվ հետազոտման, հիմնավոր եզրահանգումներ կատարելու, աշխատանքի արդյունքները ճիշտ ձևակերպելու, փաստացի արդյունքների մասին ղեկավարությանը ժամանակին տեղյակ պահելու համար:
IV. Լեզուները	<p>Հայոց լեզու – գերազանց</p> <p>Առաջին օտար լեզու – բավարար</p> <p>Երկրորդ օտար լեզու - բավարար</p>
V. Համակարգիչը	<p>MS Word, Excel - բավարար</p> <p>Internet Explorer` բավարար</p>
VI. Գիտելիքները	Սպառողական ապրանքների որակի փորձագետի մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ է գիտելիքներ ունենալ ապրանքագիտությունից, ապրանքների արտադրության տեխնոլոգիայից, ստանդարտացման և համպատասխանության գնահատման համակարգերից, այդ ոլորտները կարգավորող օրենքներից, իրավական և նորմատիվ ակտերից, չափագիտությունից, կազմակերպությունների և դրանց ստորաբաժանումների աշխատանքի կազմակերպումից, տեղեկությունների մշակման համար կիրառվող մեթոդներից:
VII. Կարողությունները և հմտությունները	Սպառողական ապրանքների որակի փորձագետը պետք է ունենա <ul style="list-style-type: none"> - ապրանքի որակի ցուցանիշների հետազոտման համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերի ընտրության կարողություն, - ապրանքի որակի ցուցանիշների հետազոտման համար նորմատիվ փաստաթղթերը օգտվելու հմտություն, - ապրանքի որակի ցուցանիշների հետազոտման մեթոդի և միջոցի ընտրության կարողություն, - ապրանքի որակի ցուցանիշների հետազոտման մեթոդի և միջոցի կիրառման հմտություն, - հետազոտման նպատակով նմուշառում կատարելու հմտություն, - ապրանքի որակի հետազոտման գործիքները, սարքերը և պարագաները կիրառելու հմտություն, - ապրանքի որակի ցուցանիշների ձևավորման գործընթացի

	<p>փուլերի հետևանքները գնահատելու կարողություն,</p> <ul style="list-style-type: none"> - ապրանքի որակի հետազոտման արդյունքները ընդհանրացնելու և եզրահանգումներ կատարելու կարողություն, - ապրանքի որակի հետազոտման արդյունքների փաստաթղթային ձևակերպման կարողություն:
VIII. Անձնային հատկանիշները	<p>Հաղորդակցվող, կարգապահ, ճշտապահ, պարտաճանաչ, նորն ընկալող, դիտողունակ, համբերատար, հանդուրժող, թիմային աշխատանքի հակված, օբյեկտիվ, ընկերասեր:</p>